

Ոսկան վարդապետին տպագրական գործին մասին երբ խօսեցանք, հրատարակեցինք նաեւ վաւերաթուղթ մը, 1673ին գրուած՝ յորում Յակոբ Կաթողիկոս դարձեալ կ'ընդունի Հոռմի Քահանայապետին զլիաւորութիւնը Ընդհանրական Եկեղեցւոյ մէջ:

Կաթողիկէ Եկեղեցւոյ Պետին հանդէպ իր այս հպատակութիւնը չ'արգիլէր Յակոբ Կաթողիկոսը նոյնիսկ առաջնորդ մը զրկելու Լեհաստան ի բացակայութեան թորոսովիչ Արքեպիսկոպոսին:

Ահա ինչ հանգամանքներու մէջ կը պատահի այս դէպքը:

Լեհաստանի Հայոց միութիւնը Կաթողիկէ Եկեղեցւոյ հետ աւելի ամրապնդելու նպատակաւ, տեղւոյն Առաքելական Նուիրակը՝ Բինիագեւլի կը թելադրէ Հաւատոյ Տարածման Ս. Ժողովին որ Հոռմ կանչուի Նիկոլ Թորոսովիչ Արքեպիսկոպոսը, որուն ներկայութիւնը դժպէտի էր բազմաթիւ հայ հաւատացեալներու: Ս. Ժողովը կը հաւանի այս առաջարկին: Այնուհետեւ նուիրակը հետամուտ կ'ըլլայ Թորոսովիչը համոզելու որ Հոռմ երթայ, բայց ի դուր: 15 Մարտ 1668ին Բինիագեւլի կը յաջորդէ Մարեսգողդի Արքեպիսկոպոս, որուն նոյն թելադրանքներուն ի վերջոյ կ'անսայ Թորոսովիչ եւ կ'որոշէ Հոռմ երթալ: Ծամբայ կ'ելլէ 11 Հոկտեմբեր 1668ին: Մարեսգողդի նաւերակը Ս. Ժողովին կը գրէ որ Թորոսովիչ այլեւս Լեհաստան չ'ըրկուի, եւ Լէոպոլսոյ հայ թեմին օգնական վիճակաւոր